

ԲԱԺԱՆՈ՞՞՞ ԱՂԻՌՈՒԹԻՒՆ

Պաշխարիոյ համար
Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 6 »

Արասահմանի համար
Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ավերիկայի համար
Տարեկան 3 ՏՐԻ.
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՍԻԿ ՎՃՃԻԼԻ

Իրանացուան տոյր ստային
արեսին համար 40 սակրիս
Կ. իսկ վերջին երեսի հա-
մար 20 սակրիս Կ. երեսին
սակրի սակրիսերու համար
20 Օլլ գեղը կըրայ:

ՇԱՐԺՈՒՄ

Նամակ եւ դրամ գրկն
Խմբագրութեան հասցեին

—

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна

Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

—

Գրութիւնք եւ լին տրուի
Արասահմանի համար ձեռքի
(20 ՍԱՆԻՒՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐՔԻ ԵՒ ՇԱՐՔՈՒ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Никола Бакърджиевъ

Պաշխարիոյ համար ձեռքի
(15 ՍԱՆԻՒՄ)
Վաւերացի համար ձեռքի 10 սակրիս

ՄԻ ՈՒՐԱԽ ԵՐԵՒՈՅԹ

Բաւական ժամանակ է որ մի քանի յայտնի թերթեր ուշ ուշ են երեւան գալիս: Քննադատութեան, ինքնամոլութեան քողի տակ ծածկված այդ հակայեղափոխական և հակայառաջագրիական օրգանները, որոնք դեռ մի տարի առաջ հեւալով հարւածում ու փշուրում էին այն ամէնը ինչ որ յառաջդիմութեան արգիւնքն ու հիմն էր կալուած այսօր շնչակաուր են եղել: Ի՞նչ է արդեօք դրա պատճառը: Իրենք, այդ բէականական պետերը, նոյն իսկ անշնորհք պահպանողականներ եղան, թէ՛ այտառածմանի հայ ժողովուրդը հասկացաւ դրանց գոյութեան բուն նպատակը և երես գարծրեց:

Այդ ահագին բանակը, որի շէֆերը տաճկահայ գրականութեան աստղերն էին կազմում, երանելի ժամանակներում, այսօր մի տեսակ զինադադար է արել: Ի՞նչ է արդեօք պատճառը կրկին ուժերից զրկվելը, մաշո՞ւմը, թէ՛ հասարակութեան ուշքի գալը:

Մենք այդ հարցին պատասխան տալու արամադիր չենք, միայն սրտանց շատ ուրախ ենք որ մի փաստակար մամուլ, կեղծիքների մի ամբար ստիպում է թէ ոչ բոլորովին լռել, գոնէ երկարատեւ լռութիւն պահպանել մինչեւ որ բոլորովին լռի: Ահաւատացած ենք որ բոլորովին լռելու օրն էլ շատ հեռու չէ:

Այս ուրախալի երեւոյթը փաստ է որ այդ գրական աստղերի հիմնած օրգանների գէ՛մ ստեղծված յառաջագէ՛մ մամուլը, որի զեկավարները գրական ոչ մի համբաւ ունեն, իր անկեղծութեամբ, իր տոկունութեամբ կարողացաւ իր պարտքը կատարել գէպի հայրենիքը և գիմագրել այն փաստակար ու վարակիչ հոսանքին որ ստեղծվում էր շնորհիւ ճա-

ճանչափայլ, բայց նեխված մամուլի զեկավարների: Բայց յառաջագէ՛մ մամուլը դանդաղ չը պէտք է բաւականանայ, նա պէտք է բոլորովին լռեցնի այդ գերեզմանական ձայները, և, լռեցնելուց յետոյ էլ՝ այնպէս մի դիրք բռնի, որ այլեւս հնար չը լինի այդպիսի մի փաստակար մամուլ ստեղծել: Արովհետեւ այդ տեսակ մամուլի մեր ժողովրդին հասցրած փաստները շատ մեծ են ու աւելի մեծ կը լինեն եթէ նա կարողանայ արմատ բռնել մեր մէջ:

ՎԱՐԳՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 29 Դեկտեմբեր

Ցասն և իններորդ գարը կը վերջանայ, կերթայ խառնուելու ժամանակին անհուն միութիւններու հետ, որոնք եկեր ու անցեր են, տանելով իրենց հետ անվերջ յիշատակներ, մարդկային մշտքեր, ուրախութիւններ, յոյսեր ու տանջանքներ:

Երբ Եւրոպացիները կը փառաբանեն ժժ գարը՝ պակ գիտութիւններու, արհեստներու և գիւտերու, երբ կը գովեն զայն իբր մեծ ու մարգարէր գաղափարներու ծնունդ տուող ժամանակաշրջան մը, այն պահուն երբ եւրոպական նոյնիսկ աղքատ ու բանոր դասակարգը հրճուանքով կը դիտէ, որ այդ գարու մէջ ինքը «ոչինչէ» «ինչ» մը դարձաւ հոգի ու մարմին առաւ, կազմակերպութիւններ ստեղծեծ խորունկ ու ճշտարիտ վարդապետութիւն մը աշխարհ բերաւ, փառաւոր ու շի տեսնուած «աղքատ—աշխարհներու» ձոյլ միացած բանակ մը կազմեց, իր բաղմամբ կատար իրականը զըրկեց ազգային գերագոյն ժողովներու մէջ, որ մինչեւ այս գարու կէսերը կրօնաւորներու, ազնուականներու և պոռճուտներու մենաշնորհն էր... Աւրեմ երբ Եւրոպայի ամէն գասակար-

գերը ժժ գարէն դո՛հ ըլլալու գէթ փոքրիկ պատճառ մը ունին մենք հայրս—խեղճ ու ոգորմելի հայրս՝ անէ՛ծքի կոյտերով կը ճամբենք զայն «գրողի ծոցը», ժամանակի ամէնակուլ սրկորը, այնպէս մը կարչի որ այլեւս ետ չի գայ այն նպովեալ գարը...

Մեզի համար ժժ գարը տեսակ մը յոյսերու և յուսախաբութիւնների անիւ էր: Հնդկահայերու տասնութերորդ գարէն մնացած փորձերու յոյսը՝ Հայկական իշխանութիւն մը գէթ ստակով գնելու, քսանական թիւերու Ռուսական արշաւանքը և Ներսէս Աշտարակեցու դաշնագիրը նիքոյա ձարին հետ երեւանի, Գանձակի և Ղաթաբաղի նահանգներէն հայկական փոքր իշխանութիւն մը կազմել ընդ հովանաւորութեամբ բուսերու, Բեարբիսան-Պէյի և իր ընկերներու քիւրտ-հայկական ապստամբութիւնը ընդգէ՛մ թուրքերու 1835—1840 թիւերուն, անոր զաւակ եղտիշարի փորձը 1853—1858 Խրիմու պատերազմի առնէ: Ձէյթունի քանի մը ապրտամբութիւնները, որոնց պակն էր 1864ի յաջող «պատամբութիւնը և Գաղղիոյ միջամտութիւնը: Թուրքիոյ հայերու սահմանադրութիւնը և անոր հետ կապուած յոյսերը, 1877ի պատերազմի առնէ և 78ի դաշնագրի վարթեցուցած տենջերը, 1880էն սկսուած և 1890ին արիւնի ճամբային մէջ մտած Հայկական շարժումը, որ մենք կը սիրենք «հայ յեղափոխութեան» մեծ տէտղտոզ կոչել...

1894ի Սասունի ապստամբութիւնը, միջազգային «քոնթրոլ» քոմիսիոնը, անոր մշակած բարենորոգումներու ուսուցիկ ու սնամէջ ծրագիրը... կրկին յոյսեր, յոյսեր: Բ. Գրան ցոյցը—կրկին յոյսեր... յանկարճ մեծ ոճգագործի մեծ ջարդերը: Ձէյթունի վերջին «յանկարճակի», առանց պատրաստութեան ապստամբութիւնը... կրկին յոյսեր, անվե՛րջ յոյսեր: Պանքայի գէպքը, վերջին ամենէն յուսահատական ու հերոսական փորձը,

ժժ գարի հայերու կեանքի մէջ: Յոյսերու վայրկեան մը... և նորէն ջարդեր: Աւ յաջորդեցին յուսախաբութեան տարիները: Կատաղի բռնկումներու, ցնցող երեւոյթներու ետեւէն եկան «թոյլ կրակի վրայ խորովուելու» անձայն՝ բայց սպաննիչ գործողութիւնը: Աւ կը կնքեն հայ գաւառները դժոխային անէ՛ծքով ժժ գարը— յոյսերու և յուսախաբութիւններու անվերջ անիւը: Հայկական գաւառները աւերուած, ժողովուրդը սովի ու բռնութեան ճիրաններու մէջ գալարուած, հայ բնակիչներէն 100—150,000էն աւելի օտարութեան մէջ տարագրուած, հայերի տասարդութեան ամենէն ընտիր սիրտերը (եթէ ոչ գլուխները) բանտերու և աքսորի մէջ տեղադրուած, հայութիւնը անգամահատուած, արիւնքամ եղած տնտեսութիւնը աւերած... Ահա ժժ գարուն ընդհանուր արգիւնքը հայութեան համար:

Բայց չի յուսահատինք, ընթերցող: Կէտ մը կայ, փոքր բայց փաշլուն կէտ մը հայութեան այս դարուս մէջ կրած ամէն ելեւէջներու կրած ընթացքին մէջ: Մինչեւ 1878 թիւը հայութեան ըրած ամէն փորձերը կամ անհատական էին կամ լոկ գաւառական տեղական և միայն փոքրաթիւ անհատներու սրտերու մէջ արձագանք կուտային: Իսկ Պեռլինի դաշնագրէն ետքը շարժումը սկսեց «ընդհանուր» հայկական բնաւորութիւն ստանալ, ամէն հայու սիրտը բարախել ալ: Ասոր անունը կը գնենք — «հայկական վերածնութիւն»:

Ժժ գարը ջարդեց փշրեց մեր շատ սրբազան յոյսերը: Մեր տունը քանդեց, զմեզ անդամահատեց, մուրացիկ դարձուց, սովի ու յուսահատութեան ակուններու տակ նետեց, միայն վերածնեցուց տղաթեան, մէկ ժողովուրդ, մէկ մարմին ըլլալու և շահերու ընդհանրութեան դազափարը: Մեր ընդհանուր դժբաղդութիւնները վարժեցուցին զմեզ ամէն հայ մեր եղբայրը և

ազգային ընդհանուր շահին շահակից համարել, «միասին» աշխատել, ու ձեռք ձեռքի տուած ընդհանուր թշնամունքն զէմ երթալ: Կարճ ըսենք -- վերջապէս ցրուած, անասնացած հայ ժողովուրդը նորէն գտաւ իր ազգութիւնը, վերածննդու: Այդ վերածննդի ժամանակ մանր սպիտակ մեր ազգային յեղափոխական կուսակցութիւնները, քսաներորդ դարը լը մտնան լի յոյսերով, մանուկի մը պէս արագ աճող ու զօրացող կազմուածքով:

Ինչէ՞ արգեօք վերապահած մեզի համար քսաներորդ դարը մարգարէանալ չըլլար: Միայն դրական է մէկ բան մը, հայը արմատախիլ եղող ժողովուրդ չէ. հայը բնաջինջ չի կրցին ընել, ոչ ձինկիլխոնները, ոչ Լէնկիթիմուրները, Հուլազուները, ոչ արաբական հրոսները, ոչ Համբար խաւար ու փոքրիկ նախնիքները... Ձայն ջնջել չի կրնար Համբար և իր «կասկածելի» յաջորդները... և ան ուլ ալ չի, երբ հայութիւնը վերածնունդի ազգ կազմելու անհրաժեշտութիւնը զգացիր է:

Ընթերցողներէն ներողութիւն խնդրելով մեր ընդհանուր գիտողութիւններու առթիւ, անցնինք շարաթական տեսութեան: Խրխայի ճէրիֆը կատարուեցաւ դեկտ. 25ին երկուշաբթի օրը: Թէ Ղալաթիոյ և թէ Պէշիկթաշի ճամբաները մըջիւնի պէս իրարէն ինչ լեցուած, անցողարձը բոլորովին դադարած էր: Օղը իրիստ դեշ էր, օրուան հերտի, Համբարի պէս ժանգոտ ու գէշ, անձրեւ, ձիւն ու քամի իրար կը յաջորդէին, նապաստակը կէս օրի ատենները ծովով փախաւ. երեկոյն նորէն ծովով, Օրթա-Գիւղի ճամբով բունը մտնել շտապեց: Օրթա-Գիւղի նաւա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

Մ Ա Կ Ե Դ Ո Ն Ա Ց Ի Ն Ե Ր Ը

Երեք տօրի առաջ էր, գտնվում էի Ռուսոյում. համեստ բարեկամիս բնակարանում նստած նամակագրութեամբ էի զբաղված, երբ յանկարծ ներս մտաւ մի հայ բարեկամ եւ յայտնեց որ մի Մակեդոնացի երիտասարդ սպա ուսում է ինձ հետ սեւասկցութիւն ունենալ: Մնացի զարմացած. Մակեդոնացի, եւ երիտասարդ սպա ինձ հետ ի՞նչ գործ ունէր. ի հարկ է հետաքրքրվելով, իսկոյն նոյն երեկոյան ժամը 10ին ժամագիր եղաւ մի յայտնի սրճարան ժամագրավայր նշանակելով:

Որոշեալ ժամին նշանակուած սրբ-

մատոյցէն կառք նստած պահուն թուրքին մէկը հեռուէն թուղթ մը ցցուց, ինչ իր ունիմ փաստաշահին տալու՝ ըսել ուզելով: Իսկոյն զինուորներ վրան թափեցան և սաստիկ ձեռնարկ պահականոց տարին: Կըսուի թէ խեղճ մարդուն ոսկորները ըլլաք ինչ են զարձեր: Ուրիշ միջպէս չեղաւ, թէ և շատ զրոյցներ կը պտտին: Դոյն օրը բանտերէն արձակուեցան շուրջ 400 հոգի. մէկ մասը Բամպանը արած թուրքեր, 15—20ի շափալի իդուր ծակ նետուած հայեր...:

Ձեք հաւատար, երբ «իզուր բռնուած» կըսեմ արձակուած հայերուն համար, լսեցէք: Ձեզի ստակցի հացագործ (փողոցները հաց ծախող) Պետրոս Ձըթըրեան անուն անձը ձերբակալեցին փոխուները, ամսոյս 24ին, բանտ տարին, գիշեր մը պահեցին, 30 ոսկի տուգանք տոնելով իսկոյն արձակեցին: Այսպէս ազէկ է, և Սուլթանի մեծահոգութեան համար բաւական զոհեր կըլլան և անվճար ամսականներու փոխարէն հայու գրպանի ստակը ծառայողներու գրպանը կը մտնայ ինքնիրեն:

Օ Ր Ը Օ Ր Ի Ն

Մ Մ Ա Ն Տ Ի Կ Ի Ն Տ Ի Ս Ս Ի Ր Ի Ե Ի Մ Մ Ա Մ Ո Ր Դ Ե Ն Ե Ի

Երկու դէմքեր ալ կանհետանան աշխարհէն, որոնք մեր ժամանակակից գրական կեանքին մէջ կարեւոր տեղ մը գրաւած են իրենց գործունէութեամբ՝ տիկին Տիւսար և Մամուրեան: Տի. Տիւսար վառ երեւակայութեամբ օժտուած առաջին կին վիպասանը, որ Պօլսոյ վերին դասակարգի հայ ընտանեկան

ճարանը մտայ, աչքերս չորս կողմ դարցնելով հեռաւոր անկիւնում նկատեցի հայ բարեկամիս՝ երկու սպաների հետ նստած, ու, հասկանալով որ տեսակցութիւն փափաքողները գրանք պէտք է լինեն, մտեցայ նրանց: Բարեկամս ինձ ծանօթացրեց երկու սպաների հետ և ինքը, մի քանի խօսք փոխանակելուց յետոյ, իր պարտականութիւնը կատարած համարելով, հեռացաւ: Սպաների մէկը առանց մազ ու մորուքի մի կրիտասարգ էր, սեղմված շրթունքներով ու ծնոտով, միւսը մօրուսաւոր խաղաղ դէմքով եւ բարի աչքերով. առաջինը կատաղի, բուռն, իսկ վերջինը խաղաղ ու արդէն հասակն առած մարդի լըլուծիւնով: Նրանք երկուսն էլ յայտնի հերոսներ էին, 94 թուականին Մակեդոնիա խուժած բուլղար հերոսների զլուխը անցնելով, իրանցութիւնը սկսվեց. պարզ է թէ նրեթը մեր և Մակեդոնական յեղափոխութիւնը էր:

Նրանք դժգոհ էին այն ժամանակ

կեանքը ուսումնասիրեց և զայն պատկերացուց իր «Մայտա» վէպին մէջ: Իսկապէս արուեստագէտ մը չեղաւ, այլ գրեց եւրոպական վէպերուն վրայ ձեւելով իր գործը: Իր վէպերը նշանակութիւն ունին անոր համար որ առաջին փորձերն են, հայ կնոջ մը կողմէ, իրական կեանքը ուսումնասիրելու և մեր ընտանեկան վիշտերն ու հրճուանքները սովորութիւններն ու նախապաշարումները արտայայտելու, ինք ալ արուեստագէտ նոյն ընտանեկան վիշտերով, ամուսնական նոյն յուսախաբութիւններով, անձամբ ենթարկուեցաւ ընտանեկան զբերախոյնութեանց զառնութեան, զորս զուրս պոսթիկաց զգայուն ստղերով:

Հոյակապ հնութիւն մըն է որ կը խորտակուի Մամուրեանի մահով: Ամբողջ 50 տարուան գործունէութիւն մը կը մարմնանայ իր մէջ: Ձմիւռնիս ծնած ու Բարիկի մուրտեան վարժարանին մէջ իր ուսումը աւարտած Մամուրեան իր ծննդավայրը դարձաւ գործելու, կուտելու, հինը ջախջախելու շրջանի մը մէջ՝ որ գորաբառը կը թագաւորէր: Մամուրեան գրեթէ միս մինակ, իր բազմաթիւ հեղինակութիւններով ու անհամար թարգմանութիւններով, որոնք մաքուր յստակ, պարզ, բայց չլոս ու կորովի լեզու մը կը կրէին, զուտ աշխարհագրութիւնով և պահպանեց: Իբրև հայ անիկայ չի մոռցաւ իր հայրենիքը. Բաթիթին ու Մերէնցէն առաջ ու անոնց հետ անիկա Հայաստանի ցաւերը նկարագրեց, քաջ զէյթունցիներ կրգեց, իր անամականիւններուն մէջ հայուն ցաւերով բարախուն վշտայոյզ սրտի մը ապացոյցը տուաւ, ժամանակակից երիտասարդութիւնը ոգեւորեց և անոր մէջ ազգին

վայ մակերեսական բարձրագոյն կոմիտէի գործունէութեան ձեւից, մեր գործունէութիւնը գրուածելով: Աւելի երիտասարդը, կատաղին իր բարակ շրթունքները գրեթէ կրծելով, յայտարարեց. — Մեր Բարձր. Կոմիտէն ոչինչ չէ անում. մեծ մասամբ թուլամորթ երկար ու բարակ մտածող, քաղաքականութեան վրա մեծ յոյսեր դնող ոչ յեղափոխական մարդկանցից է կազմված, ոչ գրամ ունի և ոչ մի բան. ուղղակի մեր հարցը քննադատ մտնցնում են: Մինչև այդ մարմինը չի տապալվի, մինչև գործի ղեկը ամբողջովին յեղափոխական մարդկանց ձեռքը չանցնի Մակեդոնիայում ոչ յեղափոխութիւն կարող է լինել, ոչ ապստամբութիւն... — Միւս ընկերը լուծիւմիս իր ընկերով ասածներին հաւանութիւն էր տալիս, միայն գլուխը օրօրելով և իր մօրուքը շոյելով: — Բայց մենք կարծում էինք թէ ձեր յեղափոխական մարմինը շատ

սէրը մտցուց: Իր շրջանին մարդը եղաւ Մամուրեան, կրակոտ ու խանդավառ, բոմանդիկ ու գիւրու յափշտակուող, յաճախ ծիծաղելիօրէն ուսուցիկ, բայց միշտ անկեղծ ու եռանդոտ: «Արեւելեան Մամուրեանը զոր հիմնեց, ժամանակին ամենէն լուրջ կուտող մամուլը եղաւ, ահագին յեղաշրջում առաջ բերելով թէ՛ մեր լեզուին և թէ՛ գաղափարներուն մէջ»:

Բայց Մամուրեան չի կրցաւ ժամանակին հետ քալել, ինչ որ բնական էր: Ինք չի կրցաւ ըմբռնել արդի երիտասարդութեան պահանջները ու սեղագար հակառակորդ հանդիսացաւ անոյ: Աւնայն յաւակնոտութեամբ մը, որ ձեռք բերուաւ ու թիչ մըն ալ իր շրջանի բոլոր հայ գործիչներուն յատուկ է, Մամուրեան ուղից պարտաւել, քանդել այն ամէն բաները որոնք իրմով չէին սկսած: Ուստի լրուեցաւ երիտասարդութիւնն ու նոյնիսկ մոռցուեցաւ անկէ: Իրմահը պակաս մը չի ձգեր մեր մէջ, բայց յիշատակելի հնութեան մը յարգանքը կը պարտադրէ մեր վրայ:

Տ Պ Ա Ւ Ր Ո Ւ Թ Ի Ն Ե Ր

Ա Ձ Գ Ա Ս Է Ի Ր Թ Է Լ Ր Տ Ե Ս

Գնացքը շատ դանդաղ առաջ կերթար, այնպէս որ մի թրքական սայլ ամենայն զիւրութեամբ կարող էր մրցիլ անոր հետ: Պուլկար պաղծվածներն ոգեւորուած կը խօսէին ու կը հրհուային. երբեք զժող չէին վերադառնար ծննդավայր: Դէմս նստած էր սխուր զվճարով, թաւ յօնքերով մի մարդ, լուռ ու մոռլ. բնական է որ հայ էր: Սխալած չէի, հարցուցի եւ իմացայ հայաստանցի ըլլալը եւ Սարամ-

զօրեղ է. 1894 թականին ահագին իրարանցում գրեցիք Մակեդոնիայի մէջ, Ընդհանրապէս համոզված էինք որ ձեր ժողովուրդը յեղափոխութեան համակիր չէ. գոնէ երկիր մտնող մի քանի Մակեդոնացիներ ինձ այգպէս են յայտարարել: — Սուտ է վրա բերեց երիտասարդը, ձեզ հանդիպած երկիր մտնողները միայն մի քանի ժամով են երկիր մտել, ոչ երկիրն են ճանաչում և ոչ ժողովուրդը: Բարձր. Կոմիտէն յեղափոխական չըլինելով, եւ տրամադրութիւն չունենալով երկրում ապստամբութիւն բարձրացնել, միմիայն գրտից մի երկու հրոսակալութեան է ուղարկել եւրոպական քաղաքականութեան ուշադրութիւնը եւ միջամտութիւնը գրաւելու համար: Այդ հրոսակները ներս են խուժել առանց երկիր մէջ կազմակերպութիւն ունենալու, կամ թէ առանց այնտեղ գտնուող յեղափոխական տարրի հետ կապեր հաստատած լինելու, ինչպէ՞ անգիտակ ժողո-

պէջ երկուսը . ուրախ էի որ ճամբու հայ ընկեր մը գտած էի . ուստի պայուսակէս քանի մը խնձոր հանեցի եւ հայաստանցիիս հետ հաւար բաժին ըրի :

Մէջ մըն ալ տեսնես զօտիէն խոպ խոշոր դանակ մը հանելը եւ ինձ դարձունելը մէկ շընէ՞ . (բէլօլ մըն ալ ես նկատեցի) :

— Հրամայէ կ'իջնուի :

Ես սարսափած սեղելս թռայ . ի՞նչ շարագործ հայաստանցի պիտի լինէր որ դանակ եւ տիպոգրֆի ունենար քովը . եւ սարսափս քառապատկեցաւ . երբ յիշեցի որ ուստի պիտի գտնուէր ինչ որ սովորին Հայաստանի մէջ սրիւնը կը հոսի :

— Մի՞ պահեր այդ զէնքերը . գոչեցի :

Վանցին ապա՞ծ ինձ կը նայէր :

— Եղբայր . քանի մարդ տեսած չէ նեղ վար այդ կրակները :

Վանցին կը շարունակէր ամպած նայիլ :

— Ի՞նչ կը նայիս . կաղաչեմ . կը պաղատեմ վաղ անցիր 30—40 լէվէն ի սէր ազգին . ի սէր երկրին մէջ միացող կանանց եւ աղայոց :

— Եֆէնտի . ինչ կայ որ . . .

— Հապա եթէ Պրազլիտին իմանայ որ գրէ Սուլթանին :

— Պրազլիտին ո՞վ է :

— Պրազլիտին Ամերիկայի մէջ է եւ երկու կուսակցութիւն ունի :

— Ամերիկա ո՞ր . Սուլթանը ո՞ր :

— Հա՛ . երեւի ձեր կողմերը քաղաքականութեամբ չեն զբաղուիր . Պրազլիտին կառավարութիւնը իմանայ հայերու զէնք ու զինավարժութիւն ունենալը ու գրգռէ Սուլթանին :

— Պրազլիտինը ինչո՞ւ կերթաս . այստեղ պակաս են վատեր :

— Ապրի՛ս . ապրի՛ս . աղէկ որ դու իր . Սուլթանը իմացածին պէս հայերուն ո՞րքան միասնեք պիտի տայ . եւ սկսայ մէկիկ մէկիկ Ռուս-ճուզցիներու գիտցուցած միասնեք ոգևորում բացատրել . զեռ չը վերջացուցած . վանցին այնպէս խոշոր քա՛նք քա՛նք մը փրցուց որ պաղեցայ միացի :

— Ինչո՞ւ կը խնդաս . բարկացայ ես :

— Ձեզի պէս երանելի էֆէնտիներու վրայ չի խնդամ . որո՞ւ վրայ խնդամ :

— Ե՛ս մի երանելի :

— Հապա ի՞նչ ես . չե՞ս իմացեր

որ հայերուն արդէն արդիւնաւոր է Տաճկաստան մտնել :

— Մի՞թէ . զարմացայ ես .

— Ձե՞ս իմացեր որ հայերուն հողերը կը խլին ու կուտան քիւրտներուն . չէրքէզներուն եւ այլն .

— Ձե՞մ հաւատար .

— Ձե՞ս իմացեր որ փաշաները փոխանակ պատժուելու ահագին նուէրներ կատանան Սուլթանին :

— Անկարելի է .

— Ձե՞ս իմացեր որ հայկական ինքնավարութիւն չի կայ եւ այդ ինքնավարութիւնը չը տալու համար հարիւր հազար հայ ջարդել տուաւ Սուլթանը .

— Այդ բողոքովին սուտ է . այդպէս բան չըսին ուստի պիտի չըսեն :

— Սուտ է մի՛ :

— Եթէ սուտ ալ չեն . շատ հին բաներ են :

— Ձերո հինգ տարին հի՞ն է .

— Քաղաքականութեան մէջ 4—5 ամիսն ալ կրնայ հին համարուիլ .

— Այս տարուան Սպարանքի կուտորածն ա՞լ հին է . Տիպրանակերտի թալաններն ալ հին է . հատ հատ թրքանային ալ հին է բացառաւորաց տաքցած խոսակիցս .

— Ընդունի՛ք որ հին չեն . բայց ատոր ալ գո՛հ միայն է . պէտք չէ որ զինավարժութիւն սովորիք . Սուլթանը կը հասկնայ որ մը . որ այդ վարժութիւնը իրեն դէ՞մ դառնալու է եւ վրէժ հանելու համար բոլոր հայերը կը կոտորէ :

— Հատ հատ սպանուելին ալ կուտորուիլ չէ՞ . ո՞ր սրիկան ըսաւ որ Սուլթանը մեզմէ վրէժ հանելու վիճակին մէջ է . մե՞նք անկէ վրէժ պիտի լուծենք թէ ա՞ն մեզմէ . անոր ըրածներուն փոխարէն զեռ մե՞նք ի՞նչ ըրինք :

— Բայց քաղաքական նպատակով վարկեններու սպասել պէտք է :

— Ինչի՞նք էք . ի՞նչ էք . մեր զինավարժութիւնը ի՞նչ կապ ունի քաղաքականութեան հետ . Սուլթանը մեր իշային խոհեմութեան համար որ եւ է զիջում ըրած է :

— Եթէ չէ ըրած . կընէ .

— Անոր ամէն մէկ խոսքն ու իրատէն կե՛ղծ է . կե՛ղծ . անոր հայաջինջ ծրագրները բացատրութեան կարօտ չեն . իսկ մե՞նք զեռ իրար համոզելով ժամանակ կանցուցենք . ան չի նայիր որ մե՞նք ի՞նչ կը մտածենք կամ զինավարժութիւն չենք ըներ . հարիւր հազար կոտորուողները մե՞ծ մասամբ անդէն . անվարժ

եւ հլու հնազանդ մարդիկ էին . ինչո՞ւ անոնց չի խնայցի :

— Ի՞մ կարծիքով հիմա անխոհեմութիւն է հակառակութիւն ընելը .

— Մո՛ . սա՛հա անխոհեմութիւնը միայն . ձե՛ս այս ինչ տեսակ մարդիկ կան . օտու՛նում . կինէ օտու՛նում . ս'ա կարող այս նամակները . տես ի՞նչ կը գրէ եղբայրս հայրենիքէն . եւ բարկութենէն զողողալով . ծոցէն երկու նամակ հանեց ու նստեց ինձ :

Այդ իւրոտ թղթի կտորները բնաւ չէի ուզեր կարդալ . բայց վանցէին սկսած էի վախնալ . ակամայ կարդացի :

Վանայ գաւառ . 8 Հոկտ. 1900

Սիրելի եղբայր .

Եթէ վանայ ծովը մեկան ըլլար . այգեստանի ծառերը գրիչ եւ սերնէները թուղթ ըլլային . դարձեալ չէին բաւեր մեր թշուառութիւնը նկարագրելու . ատկէ բերած քանի մը ոսկիս վեց ամիս մեզ կը բաւէ . ամէն բան աժարէ . բայց զորո՞ւմ չի կայ . կերած հացերնիս վար չեք թար . դիմացի Աւօնիք սոված . զբացի Միսօն հիւանդ . տղաքը մերկ ու քաղցած . զեղեցիկ նեմալարը փախաւ լաճի մը հետ . էրկանէն փող չէր գար եւ ազգէն հրաման չէին տար կրկին ամուսնանալու . ամէն կողմէն նոր նոր սպանութիւններու եւ իսլամացումներու լուրեր կուգան . Աստուած իմ եթէ քիչ մը զէնք ըլլար . ինչե՛ր չէր ըներ այս յուսահատ սոված ամբողջ . զէնք կը կրկնեն ամէն կողմէ . բայց պիտի կրնանք գործածել . ես գոնէ չեմ կրնար . կը սիրեմ զէնքը . զիտե՞մ որ ան հիւանալի պաշտպան է . բայց ձեռքս որ առնեմ զողալս կուգայ . ինձ այնպէս կը թուի թէ մէջէն գնասկը հոտ պիտի թռչի ու զիս սպաննէ . հիմա կափստամ որ ես այդտեղ ինչո՞ւ չի վարժուցայ զէնքի . փոխանակ խահլէներու մէջ ժամանակ անցուցուցի . աւելի լաւ չէ՞ր քիչ մը հրացանի վայժուէի եւ ամէն վտանգի դէմ պատրաստ գտնուելի . է՛հ «կեանքիս սորաքի ազլի պէնում օլա» կըսեն թուրքերը . բարեւներ եւ այլն :

Երկրորդ նամակով կիմացէր իրենց թալանուելը եւ անմիջական փող կուղէր :

— Հը՛ . հիմա ի՞նչ կըսես . խոհեմութիւնը փարա կընէ՞ .

բայց այնպի որ կը կարողանայ դիլետանտներին խեղդել :

Բաւական է միայն այդ տարրի ձեռքը անցնի գործի շեղը եւ մե՞նք հաւատացած ենք որ ամենակարճ ժամանակի մէջ Մակեդոնական յեղափոխական մարմինը կը դառնայ միայնքան զօրեղ մարմին . որ իր գործունէութիւնը անկաշկանգ առաջ կը մղի . առանց աջ ու ձախ նայելու :

— Բայց եթէ այդպէս համոզված ու հաւատացած էք . էլ ինչո՞ւ էք սպասում :

— Ձե՛նք սպասում . ասացի որ պատրաստվում ենք հրաժարական տալ . .

Մինչեւ զիջելովայ ժամի մէկը խօսելուց յետոյ ես բաժանվեցի նոր բարեկամներից :

Դանուրի ափից մինչեւ հայոց թաղը բաւական երկուր ճանապարհ է . Այդ տարածութիւնը կտրել անցնելու միջոցին զիջելույին լուսթեան

— Ես կը կասկածիմ որ այս նամակները կեղծ ըլլան այդքան թշուառութիւն անկարելի է որ ըլլայ . ուստի պիտի չըսենք ինձ այդպէս բան չըսին :

— Կե՛ղծ են մի նամակները . չէ՛նէ գու կեղծ ազգասէրներէն ես . անպատճառ տեղացի ես .

— Խա՛չ որ տեղացի չեմ .

— Կամ բնիկ Պոլսեցի մը եւ կամ Պոլսի հետ առեւտուր ունեցող վաճառական .

— Ո՛չ Պոլսեցի եւ ոչ ա՛լ վաճառական .

— Կամ Բագրեցի մը . Դրիմցի մը . հին յեղափոխական մը :

— Եւ ոչ մէկը .

— Հապա ի՞նչ գործ կընես :

— Ես այնպէս կը պտտիմ . հիւսնուցութիւն ունիմ . թիշկները պատուիրեցի որ շարունակ ճամբորդեմ .

— Հայաստանցիս մէկէն ի մէկ զեղենեցաւ . ոտքէս մինչեւ գլուխս շափեց եւ նետուեցաւ վրաս ու նամակները խլեց ձեռքէս .

— Թշուառակա՛ն . դու լրտես ես . պրտաց . ես ալ ի՞նչ յիմար էի բարկացայ ու բացուեցայ . է՛հ . այստեղ Տաճկաստան չէ ապուր մըն ալ չես կարող ուսել :

— Եղբայր . լրտես չեմ . այլ խոհեմ ազգասէր մը :

— Ձէ՛ . ա՛լ չես կարող խարել ինձ . վատնողի դաւաճան . լրտես :

Եւ բոռնցքը զիւրիս պիտի իջեցունէր . երբ բարեբաղդարար պուլկարները միջամտեցին .

— Լրտես է շանորդին . մրմոաց վանեցին .

— Լրտես . առեւտրութեամբ արտասանեցին պուլկարները եւ բորբոքուած հայաստանցիս ափին տարին իրենց կողմը :

Աստուած իմ . ի՞նչ ընէի . սոսկու՛մ ինձ պատեր էր . հապա եթէ ինձի ձեռքէն կամ սպաննէին . վանցին զապանի պէս հեռուէն ինձ կը նայէր . կը մտածէի առաջին պատահած կայարանը դուրս ելնել . բայց եթէ անոնք ալ հետեւէս դուրս ելնէին եւ դանակ մը կոխէին ինձ . ո՞վ պիտի գիտնար որ ազգասիրութեանս համար զոհուած էի . սկսեք էի անիծել Ռուսճուզն ալ . մե՞ծ քաղաքագէտներն ալ Սուլթանն ալ . Հայաստանն ալ . ինչո՞ւս պէտք ազգասիրութիւնը . ինձի՞ գրին ազգին կոտորուիլը մտածող . փառք Աստուծոյ փող մի չու՛նիմ . պատիւ մի չու՛նիմ . կի՞ն մի չու՛նիմ . ելեր այս կոչու ու

վուրդը շատ էլ սիրով չը պէտք է ընդունէր այդ հրոսակներին . որոնց երեւալուց եւ անհետանալուց յետոյ իր տանջանքները աւելի շատանում էին .

Թուրքը աւելի զազանաւում էր եւ ինքը ոչ մի պատրաստութիւն ունէր գոնէ մի փոքր չափով զիմադրել կարողանալու :

— Բայց ի՞նչ կերպով էք մտածում բուժել այդ վերքը :

— Մենք պատրաստվում ենք հրաժարվել պաշտօնից եւ բոլորովին նւիրվել մեր ժողովրդի գործին . ներկայ Բարձր . կոմիտէի դէմ զժողովներ թիւր հետզհետէ շատանում է . նոյնիսկ ազատ Բուլղարիայում . իսկ երկրի յեղափոխական տարրը ոչ մի հաւատ չունի այդ մարմին վրա . Մէջ տեղից այդ անընդունակ մարմինը պէտք է վերցնել :

— Բայց չէ՞ք կարծում որ Բարձր . կոմիտէն տապալել ձգտելով պատակաւորութիւններ կը կազմվեն . ուժերը կը ջլատվեն . եւ ձեր յեղափոխական

տարրը փոխանակ գործով զբաղվելու անձնատուր պէտք է լինի կուսակցական պայքարների :

— Թող տեղի ունենայ պառակտումը . ի՞նչ վնաս ունի . այդ պառակտումով կեղծ յեղափոխականները կը հեռանան յեղափոխականներից . զուտ յեղափոխական տարրը անկաշկանդ կերպով զբաղան գործով կը զբաղվի եւ երբ տեսնի թէ զիլետանտները գործը խանգարելու չափ առաջ են գնում իրենց տղմուկներով . յեղափոխական խիստ միջոցներով կը լուցնի նրանց :

— Բոլորովին համակարծիք եմ ձեզ հետ որ ամէն ձեզ պէտք է թափել զիլետանտներին . մտավախներին եւ կեղծ քաղաքագէտներին հեռացնել զուտ յեղափոխական գործից . բայց զրա համար եւ պէտք է հաւատացած լինել զուտ յեղափոխական ու գիտակիր տարրի գոյութեան մէջ :

— Մենք հաւատացած ենք որ Մակեդոնացիներին մէջ այդ տարրը գոյութիւն ունի . թէեւ ոչ մե՞ծ թւով .

մէջ խորհրդածում էի . ինարկէ իմ խորհրդածութեան նիւթը մեր յեղափոխութիւնը եւ մեր մարմինները էին . ո՞րչափ նմանող գծեր կային մեր մարմիններին . մեր գործիչներին եւ Մակեդոնականի մէջ եւ որչափ մեծ տարբերութիւն . ներքին մի գաղտնի ուժ ինձ համոզում էր թէ Մակեդոնացիները գործունէութեան ուղիղ ճանապարհը գտնելու վրա են . պէտք է գտնեն եւ հսկայական քայլերով առաջ անցնեն . իսկ ազգային հպարտութիւնս վիրաւորվելով այդ եղբակացութիւնից ինձ առիպում էր կարծել թէ՛ հայ յեղափոխութիւնը եւ յեղափոխականը այնքան յառաջացել են որ այլեւս անկարող են կանգնել . . .

ՎԱՐԴՈ

(Շարունակելի)

կողմից մարդոց հետ աշխարհի պատերազմի և կեանքի վատնողի ենթակա պարսպ տեղը :

Բարեբաղդարար քոնսուլ թիվ 30-ը ներս մտաւ եւ սոսմակ ուզեց :

— Պարոն , յարգանքով ըսաւ ինձ , չուք սխալմամբ երրորդ քլաս նստած էք , ձեր սոսմակը երկրորդի է , խնդրեմ հետս եկէք :

— Օրհնած քոնսուլ թիվ 30 , ուրախութեանս չափ չիկար , շտապով երկրորդը գացի եւ ազուտրիկ բաղմոցին վրայ երկնցայ , բայց երկար մտնակ քունս չի տարաւ : Վանքիին գազան նայուածքը կարծես վակրնի պատերէն ներս կը թախանցէր եւ կսպաննար , լրտես :

ՄՈՒՈՐՍԿ

ՏԵՂԵԿԱՐԵՐ

Ռուսներէն «Ճամբորդ» մը կը գրէ մեզ :

«Ռուսներէն ընթերցարանը ծանօթ է բոլոր պուլկարահայերուն իր ճոխութեամբ և շքեղութեամբ : Բայց հակառակ այս ընթերցանելի առարկաներու առատութեան , կարգաւոր համար ընթերցարան յաճախողներու թիւը շատ չնչին է : Օտար այցելուի մը վրայ այդ սրահը խաղարանի մը տպաւորութիւնը կը թողու : Հոս ու հոն սեղաններու շուրջը հաւաքուած են խումբ խումբ վստահական պաշտօնեաներ , ազգային վարժարանի ուսուցիչներ , ամէնքն ալ պատուաւոր մարդիկ ու անընդհատ կը խաղան , և դրամով . . . Լուս կըլլայ որ ընթերցարանի հոգաբարձութիւնը արդիւնէ այդ անպատեհ սովորութիւնը ընթերցարանին մէջ , թող այդ վարժարանները կամ գրագէտները իրենց համար խաղարան մը հիմնեն , բայց միեւնոյն ատեն թող խորհին թէ՛ իրենց գործը մատաղ մանուկներու հետ է , և երբ անոնք նկատեն որ իրենց վարժարանները «օթուղ պիր» կը խաղան ընթերցարանին մէջ , վաղը իրենք «տիւ չէշտէն կը սկսին» :

Ամբիկայի «Ուսար»էն Աւերակցի կը գրէ :

«Մանթ շամաժողովը երկու օրէ ի վեր տեղի կունենայ հոս : 15 քաղաքէ պատգամաւորներ յերկայ էին : Իւրաքանչիւր քաղաք երէք պատգամաւոր միայն իրաւունք ունէր զրկելու : շատեր և ոչ մի կարեւորութիւն տուած էին համաժողովին ու չէին եկած : 21 պատգամաւոր կար ընդամէնը : Որոշուեցաւ յիշատակագիր մը զրկել մեծ պետութեանց : Մարտէլ ու Դիւետօք ներկայացուցիչ ունենալ , յայտագր վեցամսեային կրկին համաժողով գումարել , որբախնամներուն և կուսակցութեանց միացման շանքեր ընել : Այս բո-

լոր որոշումներուն գործադրութիւնը յանձնուեցաւ 9 անձերէ կազմուած յանձնախմբի մը , որոնք եթէ չի կրնան բաւել , 3 հոգի եւս պիտի աւելցուին խաթըրին չի մնալու համար :

Վաշ քեզ քաղաք . . . զեռայդ կարգի ցնորքներով ապրողներ կան աշխարհի մէջ :

ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒՆԻԿ

Ամբիկայի Հայ Յեղ. Փաշնակցութեան կոմիտէներու պատգ. ժողովը Մ. Նահանգներու նախագահ Մար. Քինլին անոր վերջնորոշմը շնորհակարար հետագիր մը զրկած է : Ինչ հեռագրի մէջ կը շեշտուի Հայաստանի թշուառ կացութիւնը և ամբիկեան հանրապետութեան օգնութիւնը կը հայցուի . . .

— Մուշի առաջնորդ Բարկէն վարդապետ անցեալ հինգշաբթի Պոլիս հասեր է և ուղղակի պատրիարքարան երկաթով պատրիարքին ներկայացր է :

— Խարբերդի միսիօնարներէն Մ. ժորժ Խնդրակատար վանքի համար հանգանակութիւն բացր և ընտիր մեքենայ մը նուիրեր է :

— Կաթողիկոսը 300 ոսկի զըրկեր է պատրիարքարան , հանգանակուած Պաքուի և ուրիշ քաղաքներու մէջ , կարօտեալներու համար և պատրիարքարանէն ուզեր է նպաստից սնուակին ընդհանուր հաշիւը :

— Սուրէն Պարթեւեան , որ երբեմն «Վաղուան Չայն» կը հրատարակէր , հիմա սկսած է Բարիկ մէջ «Ստարազան» անունով պրակներ հրատարակել : Ինքը , Պ. հրատարակիչը կը յայտարարէ որ իր հրատարակութիւնները Բամֆլէններու շարք մը պիտի ըլլան : Բամֆլէն գրականութեան մէջ ընդունուած ամենապատեհ ձեւն է հասարակութիւն մը շտկելու համար :

Առաջին Բամֆլէն նուիրուած է Արշակ Չօպանեանի և «Բաշալեան երեկոյթ»ին : «Ստարազան»ի մէջ Չօպանեան և Արփիարեան խարաղանուած են ամենաանխնայ կերպով : Սուրէն Պարթեւեան , Արփիարի ամենաճիշտ պաշտպանը , աշխատակիցը , այսօր Արփիարի իսկական պատկերը մէջ տեղ կը բերէ , իսկ Չօպանեանը այնպիսի վար ախար մը կը ներկայացնէ որուն նմանը հայ ազգը զեռ ծնած չունի . . .

Պարթեւեանի գրածները աւելի ազդեցութիւն պիտի ունենային եթէ իր մեղադրած Չօպանեանի մեծամտութեան հովերը չունենային և քիչ մըն ալ մաքուր ուճով գրուէին :

Պրակի գրին է մէկ ֆրանք , Ունենալ փափաքողները Կիւմուր են հետեւեալ հասցէին՝

Սուրէն Պարթեւեան 137 , Պուլվար Ս. Միշէլ—Փարիզ

— () —

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Քոսովայի Վալին Շթիպի մէջ խաղաղութիւնը վերահաստատելէ յետոյ վերադարձեր է Իւս'իւպ :

— Պանք Օթօմանը յայտարարած է Ռուսաց զեպանին որ թուրք կառավարութիւնը իրեն յանձներ է 350,000 ոսկի պատերազմի տուգանքը վճարելու համար :

— Սուլթանը չը հաւատարմով երոպական բժիշկներու որոշումին թէ Պոլսոյ մէջ ժանտախտ կայ , իր բժիշկներուն հրամայած է ժանտախտէ մեռած համարուածները կրկին քննել :

— Պատերազմական նախարարը Օսմանեան Արշիպիզադուսի ուղեւորական առանձնացած դիրքէն դժգոհ , հրամայած է ընդձովիայ հեռագրական գծով վեց կարեւոր կղզիները Պոլսոյ հետ միացնել :

— Մանաւոր նամակէ մը կը տեղեկանանք թէ Իզմիրի մէջ ժանտախտի դէպք բնաւ չէ պատահած : Միայն թէ երկու հոգի ժտակալ գիւղի մը մէջ թունաւոր սունկ կերած ըլլալով մեռած են . ասոր վրայ քաղաքին մէջ լուր տարածուած է թէ ժանտախտ կայ :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Ինթերսպորտի շինական զեպանատունը ոչ մէկ տեղեկութիւն ունի Ռուսներու դաշնակցութեան մասին :

— Կրկին ռուս երիտասարդ ուսանողութիւնը մեծ յուզմանքով մէջ է : Գիւլի մէջ տեղի ունեցած ուսանողական ազդակից ժողովին պատճառով բազմաթիւ ուսանողներ ձերբակալուած են որոնք պէտք է զրկուին Մայրագոյն Արեւելքի ուսական բանակներու մէջ ծառայելու : Նորերու Ինթերսպորտի մէջ ալ բազմաթիւ ուսանողներ ձերբակալուեր են :

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Չինական պատուիրակները խախտութեան ա ձանագրութիւնը ստորագրելէն յետոյ զեպաններուն յանձներ են կայսեր մէկ հեռագրի բանակցութեանց սկսելու հրահանգները պարունակող :

Կայսրը կը պահանջէ Թաքուի ամրութիւնները փոխանակ աւերելու : Երոպական զօրքերը գրաւեն : Ժամանակ մը Չորոշուի զէնքերու մուտքը արգիլելուն : Չօրբանակներ զրկելու պաշարումը : Կայսրը կը հարցնէ նոյնպէս թէ զօրքերու հեռանա-

լէն ետքը զեպանատունները ո՞ր չափ տարածութեամբ հող պիտի գրաւեն . անոնց պաշտպանութեան համար մնացող զօրքերուն թիւը ո՞րչափ պիտի ըլլայ . ո՞րչափ պիտի ըլլայ պատերազմական սուգանքը և երոպացիները ե՞րբ մտադիր են հանրային ծառայութիւնները շինական իշխանութիւններուն յանձնել :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Մաթէն լրագրի թղթակիցը տեսուեր է անգլիական կառավարութեան անդամներէն մէկուն հետ , որ յայտարարած է թէ Անգլիա որոշած է յամառ ըլլալ պատերազմին մէջ . ու իր յամառութեամբը աշխարհը զարմացնել , ինչպէս Պօէրները զարմացուցին իրենց դիմադրութեամբը :

— Քրիկէր Հոռոն կանչեր է իտալացի սպայ մը , որ Թրանսվալի մէջ կը կուէր , և զայն շատ կարեւոր յանձնարարութիւնով մը Օրանով նախագահ Շթէյնին քով զրկեր է :

— Օտեսայէն յանի մը ռուս պաներ կը պատրաստուին Թրանսվալ երթալ պօէրներուն օգնելու :

Ա Ն Գ Լ Ի Ա

Վիգթորիա թագուհին , որ բաւական ատենէ ի վեր հիւանդ էր , մեռեր է : Թրանսվալի մէջ Անգլիոյ կրած վերջին անյաջողութիւնները շատ ազգած էին թագուհիին վրայ :

Թ Վ Տ Ր Ո Ն Ս Ա Ն Թ Վ Լ

«Նոր Աստղ» հայ գերասանական խումբը , յուսովիկայ կիրակի գիշեր , յունուար 14/ին , ինպատ Տ. Գալեմեանի պիտի ներկայացնէ «Բէմպէ Գրչո» անուն 3 արար օրէրէթը 24 հոգիէ բաղկացեալ :

«Սէվիլի Սափրիչը» խիստ ծիծաղաշարժ զաւելչու 2 սրար :

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ջ Գ

Սուրբ Փրկչի Ազգային Հիւանդանոցի պատուաբժան Հոգաբարձութիւնը Պուլկարիոյ մէջ սպանելու համար , ի նպաստ այդ բազմակարօտ հաստատութեան հրապարակ հանուած և մասնաւոր խնամքով պատրաստուած առաջին տեսակ սփարի թղթէն հոս զրկած ըլլալով , կը խնդրուի յարգոյ հասարակութենէն որ նախապատուութիւն տայ այս թղթին . թէ անոր ընծայած առաւելութիւններուն համար և թէ նպատած ըլլալու համար հարկաւոր խիցներու հոգատարութեան ղեկավարին և բազմապահանջ գործին :

Գիւնի Տիար Պիպրեանի վաճառատունը , միակ կեցրոնատեղի Պուլկարիոյ համար , Տիպէ չէշտէ :